ոչ դադարէ։ Ի յարզրում քաղաք և ի մերձակայ նահանգս նորա եղեալ է, ասեն, գետնաշարժ մեծ, և բազում չինուածք ի յարզրում և ի բոլոր բասէն գաւառն կործանեալք են. և կարմիր վանքն իսկ գետնակուլ եղեալ է. այս էր գետնաշարժ բնական. բայց և բարոյական գետնաշարժ ազգաց ազգաց ընդ միմեանս բաղխելոց բազում ինչ լեալ լսի յայնս կողմանս։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1770 Դեկտ. 15. [Կ. Պոլիս])։

ՌԽԴ.

Աստ ի հռոմ յամենեցունց քարոզի թէ մոսկովքն փախստեայ եկին և քայքայմամբ նաւուց հազիւ հասին ի մալթայ, և անտի ի լիվոռնոյ, ոչ միայն ի բերդից պօղազի ստամպօլուն հարեալք և թօփստեալք, այլ և ի բիւրաւոր մանր ֆուլիգայից սրով և թֆանկօվ յարձակելոց ի վերայ. յորոց փախեան ասեն մոսկովքն. զալն մոսկովաց յայսոսիկ կողմանս է անսխալ... ՃԷՆռալն նոցա գալոց է ի հռոմ, և պալատն է պատրաստական։ (Հ. Գեորգ Պաղտ. առ Հ. Մկր. Ա՛ն. 1770 հռոմ, դեկտ. 22. [հռոմ])։

ՌԽԵ.

Կատարեալ որպիսութիւն այնր գետնաշարժի եղելոյ ի գաւառին Էրզրումայ՝ զորմէ գրեցի յանցեալ թղթիս, այսպէս է լեալ, զի յայնմ գետնաշարժէ պարիսպն Էրզրումայ քաղաքին փլեալ է ի բազում տեղիս. չորս կամ հինգ գիւղք բասանու գաւառին գետնակուլ են եղեալ. և կարմիր վանքն բոլորովին կործանեալ և հաւասար գետնոյ լեալ։ Խուլէլիօղլու աբրահամ աղայն ըստ խոստման իւրոյ (որպէս գրեալ եմ առ ձեզ) եւ մեզ զհարս և զմարս ոսկանայ գրոցն, զորս ըստ ժամանակին առաքեցից առ այդր։ Բայց յայսմ գիտելի է՝ Նախ այս, զի որպէս տեսի, ոչ մի տեսակ գրոց են այնոքիկ, այլ երեք և չորք, մեծք միջակք և մանունք. որոց բազումք ի հարցն ժանկռուտեալ կան. և ոմանք ևս խանգարեալք։ Երկրորդ, եթէ ոսկանայ գրոցն խալիպներն այսինքն հարքն և մարքն ընդ նոսին իցէ, դեռ ոչ գիտեմ, զի չփորձեցի։ Եւ երրորդ կան ընդ այսոցիկ գրոց նաև բազում պատկերք չարականին ոսկանայ ի կապարի ձուլեալք (որպէս յիշեմ թէ ունիմք մեք այդր զմի հատ ի յայնց պատկերաց). և այլ բազում պատկերք կոպիտք և մարդագիրք և ծաղկագիրք և ծաղիկք և կուբղայք փորագրեալք աստ ի ստամպօլ, զորս տեսանէք ի գիրս տպագրեալս ի ստամպօլ։ (Հ. Զաքարիա Ա՛. առ Մելգոնեան, 1771 Յունվ. 1. [Կ. Պոլիս])։

ՌԽԶ.

Պարոն յովսէփն գրեաց ինձ թուղթ ի հալպայ. յորում գրէ, թէ գիշատեալ սպանին զկաթուղիկոսն սբսոյ առաջի եղբօր իւրոյ։... Ընդ գրոյ պարոն յովսէփին գրեաց առ իս և պարոն յակոբն աներ պարոն յովհաննիսին՝ գիր մի, յորում գրէ, թէ սէյիտքն տիրեցին հալպու. և զոր ինչ միանգամ կամին՝ առնեն աներկիւղ ամենեին. և խռովեալ են զքաղաքն ողջոյն զցանկալին հալէպ, մինչև ոչ լինել ումեք հնար շրջիլ համարձակ ի փողոցս։ (Հ. Միք. Զամչ. առ Հ. Մանուել և Հ. Սուքիաս, 1771 Յունվ. 7. ի Պասրայ)։

ՌԽԷ.

Սէյիտքն հալպու բազում չարիս գործեալ էին ի հալէպ, և այնչափ զօրացեալ մինչև ոչ ումեք քրիստոնէի հնար լինել երևել ի փողոցի. իսկ այժմ եկեալ փաշայ մի՝ զհարիւրս ի նոցանէ հարեալ է ի ցից. և զայլ բազումս յայլ մահունս կորուսեալ. որով և խաղաղացեալ է քաղաքն. և սոքին բարձեալ է. և այս պատմեցաւ ի նոցանէ, որք ի կատարել այսր ամենայնի էին ի հալէպ։ (Հ. Միք. Զամչ. առ Հ. Մանուել և Հ. Սուքիաս, 1771 Յունվ. 27. ի Պասրայ)։